ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/40

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից 22.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանը (այսուհետ՝ նաև Ֆ/Ա) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Ս.թ. հունվարի 22-ին ոսկեգույն թույների /կիպարիս/ ձեռքբերման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ, որի մասնակցության հայտ եմ ներկայացրել նաև ես, և որի գնահատման արդյունքում տեղի են ունեցել խախտումներ, ինչի արդյունքում զրկվել եմ պայմանագիր կնքելու հնարավորությունից:

Իմ անունից ներկայացված փաստաթղթերը ստորագրվել են իմ կողմից լիազորված անձի կողմից:

Հայտերը բացվել են ս.թ. մարտի 5-ին հրավիրված նիստում, ինչի մասին կազմվել է գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի հայտ են ներկայացրել 5 մասնակիցներ, որոնցից անբավարար է գնահատվել միայն ԱՁ Սիրանուշ Հովհաննիսյանի հայտը: Բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը եղել եմ ես: Ս.թ. մարտի 6-ին էլեկտրոնային փոստի միջոցով ստացել են ծանուցում՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից մասնակցելու ընթացակարգի շրջանակներում կազմակերպված միաժամանակյա բանակցություններին:

Ս.թ. մարտի 11-ին մասնակցել եմ միաժամանակյա բանակցությունների նիստին, իմ կողմից ներկայացված գինը չեմ նվազեցրել, որից հետո նույն օրը՝ ժամը 12:13 ստացել եմ ծանուցում այն մասին, որ ճանաչվել եմ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, ս.թ. մարտի 15-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, որում նշված է, որ բանակցություններին մասնակիցները չեն ներկայացել, իսկ իմ կողմից ներկայացված հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հայտի վրա էլեկտրոնային թվային ստորագրությունը ինձ չի պատկանում, իսկ լիազորագիրը բացակայում է:

Այս ամենից հետո, ս.թ. մարտի 19-ին armeps համակարգից իմ էլեկտրոնային փոստին գալիս է ծանուցում, որ ես չեմ անցել ընթացակարգի հաջորդ փուլ, ավելին, հաղորդագրությանը կցված էր պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որում նշված էր, որ իմ կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, իսկ որպես հիմք նշված էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որով սահմանված է, որ ենթակա են մերժման այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և /կամ/ հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, այնինչ իմ կողմից ներկայացված գնային առաջարկում որևէ անհամապատասխանություն առկա չէ:

Վերոգրյալից երևում է, որ ընթացակարգն իրականացվել է մի շարք խախտումներով, մասնավորապես՝

- Հանձնաժողովի կողմից ի սկզբանե բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, վերջինիս ներկայացվել է ծանուցում, այնուհետև գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում, որը չի համապատասխանում ծանուցմանը.

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է իմ կողմից ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ համապատասխան լիազորագիրը կցված չէ, իսկ որոշման հիմքում նշել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը: Կարծում եմ, որ տվյալ դեպքում պետք է կիրառվեր Կարգի 41-րդ կետը, որի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, և ինձ հնարավորություն ընձեռնվեր շտկել հայտում առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնել լիազորագիրը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովին դադարեցնել 2019թ. մարտի 12-ի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի և 2-րդ կետերով ընդունված, 2019թ. մարտի 19-ի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով ընդունված «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանը պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է Երևանի քաղաքապետարանի՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վաչագան Մեժունցը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից 07.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 05.03.2018թ. նիստի թիվ 2, 12.03.2019թ. նիստի թիվ 3, 19.03.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը, Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցչի բանավոր դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ոսկեգույն թույների /կիպարիս/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանը և «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումով, հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի հայտով Մրցույթին ներկայացված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, 04.03.2019թ. ստորագրվել են Տիրան Լաճիկյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հանձնաժողովը 05.03.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանն առաջարկել է ոսկեգույն թույների /կիպարիս/ մատակարարման պայմանագիրը կատարել 3,850,000 ՀՀ դրամով, իսկ «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ն՝ 4,690,000 ՀՀ դրամով:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք

ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշել է նիստը կասեցնել, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Հանձնաժողովը 12.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1.1 կետով արձանագրել է, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին մասնակիցներ չեն ներկայացել:

- 1.2 կետով արձանագրել է, որ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում վերջինիս ստորագրության հետ՝ առկա չէ փաստաթուղթ (լիազորագիր), որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր: Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է մերժել Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի հայտը:

- 2-րդ կետով որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Բողոքաբերը բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի էլեկտրոնային փոստին ուղարկվել է ծանուցում, որ վերջինս չի անցել ընթացակարգի հաջորդ փուլ, քանի որ ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, իսկ որպես հիմք նշվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որով սահմանվել է, որ ենթակա են մերժման այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և /կամ/ հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, այնինչ իմ կողմից ներկայացված գնային առաջարկում որևէ անհամապատասխանություն առկա չի եղել: Բողոքաբերի մոտ տարակուսանք է առաջացրել այն փաստը, որ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանը Հանձնաժողովի որոշմամբ ի սկզբանե 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել, ինչի մասին վերջինիս ներկայացվել է ծանուցում, իսկ այնուհետև Հանձնաժողովը կայացրել է առաջին որոշումը մերժող մեկ այլ որոշում: Միաժամանակ,

բողքաբերը իր անհամաձայնությունը հայտնեց Հանձնաժողովի կողմից հայտի մերժման հիմնավորման հետ, քանի որ, վերջինիս կարծիքով, տվյալ դեպքում պետք է կիրառվեր ոչ թե Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, այլ Կարգի 41-րդ կետը, որի համաձայն Հանձնաժողովը պարտավոր էր Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանին հնարավորություն տալ շտկելու հայտում առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնելով համապատասխան լիազորագիրը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ հայտերի բացման նիստի ընթացքում Հանձնաժողովի կողմից չի նկատվել և չի արձանագրվել այն փաստը, որ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում վերջինիս ստորագրության հետ, այդ իսկ պատճառով Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Եվ միայն միաժամանակյա բանակցություններից հետո Հանձնաժողովն ուսումնասիրել և արձանագրել է վերը նշված անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ հայտով ներկայացված գնային առաջարկը վավերացնող ստորագրությունը պատշաճ չէ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

- 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է

հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

- 3.3 կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե նույն հրավերով պահանջվող փաստաթղթերը ներկայացնում է գործակալը, ապա ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

- 7.19 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի հայտով Մրցույթին ներկայացված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, 04.03.2019թ. ստորագրվել են Տիրան Լաճիկյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից Տիրան Լաճիկյանին՝ Մրցույթի հայտի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու և հայտը ներկայացնելու լիազորություն չի տրվել:

- Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանն հայտը Հանձնաժողովի 12.03.2019թ. նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում վերջինիս ստորագրության հետ՝ առկա չէ փաստաթուղթ (լիազորագիր), որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստթղթեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից հայտը ներկայացվել է Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և Հրավերի 3.3 կետով նախատեսված պահանջների խախտմամբ, հետևաբար Հանձնաժողովը՝ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ